



“ՎԵՈՆ Արմենիա” ՓԲԸ կողմից բաժանորդին մատուցվող հեռախոսակապի ծառայությունների

Հեռահաղորդակցության օպերատոր “Վեոն Արմենիա” փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 լիցենզիայի, այսուհետ՝ “Օպերատոր” ի դեմս լիազորված անձ՝ Սահակյան Ալինա, մի կողմից, և մյուս (անուն, ազգանուն, պաշտոնը) կողմից “Բաժանորդ” ի դեմս ՀՀ Լոռու մարզպետար (պաշտոնը, անուն, ազգանուն կամ քաղաքացու անուն, ազգանուն)

_____ (իրավաբանական անձի հասցեն, քաղաքացու գրանցման վայրի հասցեն)

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

“Օպերատորը” պարտավորվում է ամրակցված հեռախոսային ցանցի իր “Բաժանորդին”

(տեղադրման հասցե)
հատկացված հեռախոսագծով (հեռախոսագծերով) 7425522879
(ըստ հավելվածի՝ հեռախոսի համար, կապուղիներ, միացնող գիծ, ուղիղ գիծ, ISDN ցանցային տերմինալ՝ NETMOD սարքավորում, CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալ, անտենա և այլ կապի միջոցներ)
մատուցել հեռախոսակապի ծառայություններ՝ ըստ Բաժանորդի կողմից ընտրած տարիքային պլանի իսկ “Բաժանորդը” պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել մատուցված հեռախոսային ծառայությունների համար:

2. Վճարման կարգը և ժամկետները

- 2.1. Բաժանորդին հեռախոսակապի ծառայությունները մատուցվում են սահմանված կարգով հաստատված սակագներով՝ համաձայն Բաժանորդի կողմից ընտրած սակագնային փաթեթի՝ Բազային 1(սակագնային փաթեթի անվանումը)
- 2.2. “Բաժանորդը” մատուցված հեռախոսակապի ծառայությունների հաշիվները կարող է ստանալ Օպերատորի սպասարկման կետերում և/կամ էլեկտրոնային փոստով՝ հաշվետու ամսվան հաջորդող մինչև ամսի 10-ը:
Վճարման ենթակա գումարի մասին տեղեկատվություն Բաժանորդը կարող է ստանալ այդ նպատակով առանձնացված հեռախոսահամարով: Հետագայում, տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում բաժանորդին հաշիվները կարող են տրամադրվել նաև այլ եղանակներով:
- 2.3. Մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է ըստ հաշիվ(ների), “Օպերատոր” գործառնական դրամարկղներում, Հայփոստի, և ՀՀ բանկերի բաժանմունքներում (որոնց հետ կնքված են պայմանագրեր), կանխիկ վճարումներ ընդունող տերմինալներում կամ այլ վճարման միջոցներով, ինչպես նաև “Օպերատոր” հաշվարկային հաշվին վճարումներ կատարելու միջոցով:
- 2.4. “Օպերատորի” կողմից մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշվարկված գումարները “Բաժանորդը” պարտավոր է վճարել մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ:
- 2.5. Մատուցված Ծառայությունների ծավալը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա: Նշված գրանցումները/տվյալները հանդիսանում են Բաժանորդին մատուցվող Ծառայությունների և դրանց ծավալների մասին անժխտելի ապացույց:

3. “Օպերատորի” պարտականությունները և իրավունքները

- 3.1 “Օպերատոր” պարտավոր է՝
 - 3.1.1 Ելնելով գործող տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից ապահովել կայուն և անխափան հեռախոսակապի ծառայություններ:
 - 3.1.2 Իր ցանցի սահմաններում ապահովել հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը:
 - 3.1.3.Սեփական նախաձեռնությամբ կամ “Բաժանորդի” հայտով վերացնել առաջացած կայանային և գծակաբեւային վնասվածքները Հեռախոսակապի ծառայությունների մատուցման Կանոններով



Beeline

Սահմանված ժամկետներում:

3.1.4 Ոչ "Բաժանորդի" մեղքով հեռախոսագծերի վնասվածքների, հեռախոսացանցերում տեղի ունեցած վթարների դեպքերում ամրագրել խափանման օրը, ժամը և այն վերականգնել Հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ժամկետներում:

3.1.5 Ապահովել ՀԾԿԷ կողմից կարգավորման ենթակա հեռախոսակապի ծառայությունների սակագների բարձրացման մասին հրապարակային տեղեկատվությունը Հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ժամկետներում, իսկ այդ սակագների նվազեցման մասին՝ ոչ ուշ, քան այն կիրառելու օրվանից 3 (երեք) օր առաջ:

3.2 "Օպերատորը" իրավունք ունի՝

3.2.1 Անջատել Բաժանորդային հեռախոսագիծը (գծերը) հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ, Օպերատորի կողմից այլ պայմանագրերով բաժանորդի մատուցվող էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից ցանկացածի դիմաց վճարումները չկատարելու կամ սույն պայմանագրի պայմանները խախտելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում: Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունների առկա պարտքերի մարման դեպքում անջատված հեռախոսագծերը ենթակա են վերամիացման:

3.2.2 Հանել սույն պայմանագրի 3.2.1 կետով սահմանված ժամկետում անջատված հեռախոսագծերը, հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 3-րդ ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքերը չվճարելու դեպքում և դադարեցնել պայմանագրի գործողությունը՝ հանման օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում պահպանելով տեխնիկական տվյալները և վերականգման հնարավորությունը:

3.2.3 Հեռախոսահամարի հանման օրվանից 3 (երեք) ամսվա ընթացքում, "Բաժանորդի" կողմից պարտքերը չմարելու և վերականգման միանվագ ծառայության վարձը չմուծելու դեպքում, հեռախոսակապի ծառայությունների մատուցումը (Նոր տեղադրում) իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ հեռախոսակապի ծառայությունների դիմաց նախկին պարտքերը մարելու պայմանով:

3.2.4 Մինչև պայմանագրի դադարեցումը հաշվարկել և գանձել բաժանորդային վարձը:

3.2.5 Անմիջապես անջատել բաժանորդային հեռախոսահամարը (գծերը) և լուծել սույն պայմանագիրը, եթե

- "Բաժանորդին" տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց լիազորված մարմնի լիցենզիայի և առանց "Օպերատոր" հետ նախնական գրավոր համաձայնեցման օգտագործվում է շահույթ ստանալու նպատակով կամ
- "Բաժանորդին" տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց "Օպերատորի" հետ նախնական գրավոր համաձայնեցման տրամադրվել են այլ անձի.
- "Բաժանորդը" հանրային հեռախոսացանցին է միացրել չսերտիֆիկացված վերջնակետային սարքավորում կամ այնպիսի վերջնակետային սարքավորում, որը համատեղելի չէ կամ միջամտում է հանրային հեռախոսացանցի աշխատանքին կամ հեռախոսակապի ծառայություններից օգտվելու՝ ուրիշների հնարավորությանը:
- "Օպերատորի" քննարկմանն է ներկայացվել սույն պայմանագրով հեռախոսաֆիկացված տարածքի հանդեպ իրավունքների ունեցող անձի հայտը՝ այդ տարածքում հեռախոսային գիծ տեղադրելու վերաբերյալ, եթե "Բաժանորդին" այդ իրավունքները չեն պատկանում:

4. "Բաժանորդի" պարտականությունները և իրավունքները

4.1 "Բաժանորդը" պարտավոր է՝

4.1.1 Մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար վճարումները կատարել լրիվ ծավալով, յուրաքանչյուր հաշվետու ամսվա հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ:

4.1.2 "Օպերատորին" տեղեկացնել բաժանորդային սարքավորման տեսակի (ձևի) մասին և դրանք պահպանել սարքին վիճակում:

4.1.3 Կապի որոշ ծառայություններից (VAS) օգտվելու դեպքում ծառայությունների օգտագործման հատուկ պայմանների մասին Բաժանորդը կարող է տեղեկացվել կապը սկսվելու պահին: Կապի շարունակելուն ուղղված Բաժանորդի հետագա գործողությունները համարվում են տվյալ պայմաններն ընդունելու՝ վերջինիս անվերապահ համաձայնություն: Ծառայությունների մատուցման պայմանների հետ համաձայն չլինելու դեպքում Բաժանորդը պետք է դադարեցնի կապը:

պայմանագրում նշված
վերջին կամ կազմակերպ
վերաորին" նման կոմ
այմանագիրը վերածն
ածանորդ-իրավաբան
անվճարու նախկին
որոշում կայացնել
օրացուցային
4.1.5. Կծու
Բաժանոր
համաձ
4.1.6
"Օ

